ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԵԼՔ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան.

Ի պատասխան Ձեր՝ 02.10.2017թ. հ.06/Ե-91 գրության, տեղեկացնում ենք.

Այգեձորի 1-ին նրբանցքի հ.54 և հ.56 շենքերի հարակից տարածքը «Սանիթեք» ընկերության կողմից կրկին մաքրվել է, և վերջինիս հանձնարարվել է նշված տարածքը մշտապես պահել պատշաճ սանիտարական վիճակում: Համապատասխան ազատ տարածքներ չլինելու պատճառով՝ նշված հատվածում ներկա դրությամբ հնարավոր չէ ավելացնել աղբարկղերի թվաքանակը:

Միաժամանակ, տեղեկացնում ենք, որ «Յունիգրաֆ-Իքս» ՍՊ ընկերության աշխատանքային խմբի կողմից Այգեձորի 1-ին նրբանցքի հ.54 և հ.56 շենքերի հարակից տարածքում իրականացվել են թափառող կենդանիների վնասազերծման աշխատանքներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ